600.0028.19.06.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2001 թվականի №28
ք. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ (ՄԵԾԱԾԱԽ ԳՆՈՐԴ (ՎԱՃԱՌՈՂ-ԲԱՇԽՈՂ) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «է» և «ը» ենթակետերը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել էլեկտրաէներգիայի առուվաճառքի (մեծածախ գնորդ (վաճառող)-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը (կցվում է):
2. Չեղյալ համարել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի դեկտեմբերի 28-ի №37 որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրի (մեծածախ գնորդ-(վաճառող-բաշխող) օրինակելի ձևը:
3. Հանձնարարել «Հայէներգո» ՓԲԸ-ին և էլեկտրական էներգիայի բաշխում իրականացնող ընկերություններին՝ 15-օրյա ժամկետում վերակնքել պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով սույն որոշմամբ հաստատված օրինակելի ձևին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ